RUMELS MANAGEMENT SOLUTIONS

ՄԱՍ - 3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲԱՆԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՑՊԱՀԱՆՋ, ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 2019-2020թթ.

Բովանդակություն

- Ներածություն 3
- Ընդհանուր պարտավորություններ 4
- Ցպահանջ միջոցներ 7
- Ժամկետային ավանդներ 10
- Պարտատոմսեր 13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտության նպատակն է վերլուծել Հայաստանի բանկերի ցպահանջ (ներառյալ ընթացիկ հաշիվների մնացորդները) և ժամկետային ավանդների, ինչպես նաև թողարկված պարտատոմսերի մնացորդները:

Վերլուծությունը կատարվել է նաև ըստ հաճախորդների - ֆիզիկական անձինք և իրավաբանական անձինք: ՀՀ կառավարությունից, այլ բանկերից ներգրավված միջոցները, ստորադաս և այլ ստացված փոխառությունները ներառված չեն վերլուծության մեջ:

Թողարկված պարտատոմսերը վերլուծվել են նաև ըստ արժույթների:

Հետազոտության հիմք են հանդիսացել Հայաստանի բանկերի կողմից հրապարակված ֆինանսական հաշվետվությունները:

Ընդհանուր պարտավորությունները

- Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունները աճել են 2020թ. **830 մլրդ ՀՀ դրամով** կամ **16.9%**:
- Առ 31.12.2020 ընդհանուր պարտավորությունները կազմել են **5.748 մլրդ ՀՀ**:
- 17 գործող բանկերից ընդհանուր պարտավորությունների աճ գրանցվել է 15 բանկում:
- Ընդհանուր պարտավորությունների (տոկոսային արտահայտությամբ) ամենաբարձր աճ գրանցել են հետևյալ բանկերը - Արմսվիսբանկ **(45%)**, Մելլաթ բանկ **(41%)** և Արդշինբանկ **(29%)**:

Ընդհանուր պարտավորությունների դինամիկան 2019-2020 թթ. (մլն ՀՀ դրամ)



Ընդհանուր պարտավորությունները

- Բանկային համակարգի ընդհանուր պարտավորությունների **70%** կազմում են ցպահանջ և ժամկետային ավանդները, ներառյալ պարտատոմսերը:
- Ըստ բանկերի կառուցվածքը տարբեր է: Ամենացածրը Մելլաթ Բանկի ցուցանիշն է՝ **15%** և ամենաբարձրը ՎՏԲ-Հայաստան Բանկի ցուցանիշն է՝ **92%**:
- **Այլ պարտավորությունների** հիմնական տարրերն են. ներգրավված միջոցներ բանկերից, ՀՀ կառավարությունից, ԿԲ-ից, ստորադաս փոխառություններ, նաև հետաձգված հարկային պարտավորություններ:

Ընդհանուր պարտավորությունների կառուցվածքը առ 31.12.2020 (%)



Ընդհանուր պարտավորությունները

- Բանկային համակարգում ցպահանջ միջոցների կշիռը կազմել է **37.5 % -38%** և մնացել է գրեթե անփոփոխ 2020թ. ընթացքում:
- Ավանդների կշռի նվազման հաշվին 2020թ. ընթացքում պարտատոմսերի կշիռը աճել է **4.9%** մինչև **10.9%**:
- Անցած տարի եկամտային հարկի մասին օրենքում կատարվել է փոփոխություն, որի արդյունքում ֆիզիկական անձինք ազատվել են՝ եկամտահարկ վճարելուց՝ պարտատոմսերից ստացված տոկոսային եկամտից:
- Կարծում ենք, որ թե դրամային, թե արտարժույթային պարտատոմսերը կշարունակեն մնալ գրավիչ ներդրումային գործիք հաճախորդների համար:

Բանկային համակարգի կողմից հաճախորդներից ներգրավված միջոցների կառուցվածքը 2019-2020թթ.



Ցպահանջ միջոցներ

- Նշված **ցպահանջ միջոցները** ներառում են ընդհանուր ցպահանջ ավանդների, ընթացիկ հաշիվների և քարտային հաշիվների մնացորդները:
- Բանկային համակարգի ընդհանուր ծպահանջ միջոցները աճել են 2020թ. **112 մլրդ ՀՀ դրամով,** կամ **8.1%**:
- 17 գործող բանկերից ընդհանուր ցպահանջ միջոցների աճ գրանցվել է 13 բանկում:
- Ընդհանուր ցպահանջ միջոցների (տոկոսային արտահայտությամբ) ամենաբարձր աճ գրանցել են հետևյալ բանկերը– ԱյԴի Բանկ **(79%),** ԱԿԲԱ Բանկ **(51%)** և Արցախբանկ **(37%)**:

Ընդհանուր (ֆիզ և իրավ) ցպահանջ միջոցների դինամիկան 2019-2020 թթ. (մլն ՀՀ դրամ)



Ցպահանջ միջոցներ

- Բանկային համակարգի ֆիզիկական անձերից ներգրավված ծպահանջ միջոցները աճել են 2020թ. **103 մլրդ ՀՀ դրամով,** կամ **23.2%**:
- 17 գործող բանկերից ֆիզիկական անձերից ներգրավված ծպահանջ միջոցների աճ գրանցվել է 15 բանկում:
- ֆիզիկական անձերից ներգրավված ծպահանջ միջոցների (տոկոսային արտահայտությամբ) ամենաբարձր աճ գրանցել են հետևյալ բանկերը – Արցախբանկ **(60%),** ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ **(56%)** և ԱյԴի Բանկ **(51%)**:

Գիգ. անձերից ներգրավված ցպահանջ միջոցների դինամիկան 2019-2020 թթ. (մլն ՀՀ դրամ)



Ցպահանջ միջոցներ

- Բանկային համակարգի իրավաբանական անձերից ներգրավված ծպահանջ միջոցները աճել են 2020թ. **9 մլրդ ՀՀ դրամով** կամ **1%**:
- Իրավաբանական անձերից ներգրավված ծպահանջ միջոցների (տոկոսային արտահայտությամբ) ամենաբարձր աճ գրանցել են հետևյալ բանկերը – ԱյԴի Բանկ **(111%),** ԱԿԲԱ ԲԱՆԿ **(91%)** և Բիբլոս Բանկ Արմենիա **(49%)**:
- Առաջին **3** խոշոր բանկերում կենտրոնացված են իրավաբանական անձերից ներգրավված ցպահանջ միջոցների 57%:

Իրավ. անձերից ներգրավված ցպահանջ միջոցների դինամիկան 2019-2020 թթ. (մլն ՀՀ դրամ)



Ժամկետային ավանդներ

- Բանկային համակարգի ընդհանուր ժամկետային ավանդները նվազել են՝ 2020թ. **-27 մլրդ ՀՀ դրամով,** կամ **-1.3%**:
- Նույն ժամանակահատվածում էական աճ է գրանցվել բանկերի կողմից թողարկված պարտատոմսերի մնացորդային արժեքում՝ **252 մլրդ ՀՀ դրամով**:
- Հետևաբար բանկերի ժամկետային ավանդների շարժը անհրաժեշտ է նաև դիտարկել պարտատոմսերի հետ միասին, քանի որ հաճախ ավանդատուները որոշում են ընդունում իրենց միջոցները շարունակել պահել բանկերում, բայց արդեն գնելով բանկի կողմից թողարկված պարտատոմսեր:

Ընդհանուր ժամկետային ավանդների մնացորդների դինամիկան 2019-2020 թթ. (մլն ՀՀ դրամ)



Ժամկետային ավանդներ

- Բանկային համակարգի ֆիզիկական անձերից ներգրավված ժամկետային ավանդները նվազել են 2020թ. **97 մլրդ ՀՀ դրամով,** կամ **6.3%** (հաշվի չառնելով 2020թ. ընթացքում ՀՀ դրամի **8.9%** արժեզրկումը, նշված անկումը կազմում է մոտ **192 մլրդ ՀՀ դրամով,** կամ **12.5%)**:
- Նույն ժամանակահատվածում աճ է գրանցվել բանկերի կողմից թողարկված պարտատոմսերի մնացորդային արժեքում՝ **252 մլրդ ՀՀ դրամով** կամ **52 մլրդ ՀՀ դրամով** առանց փոխարժեքի փոփոխության էֆֆեկտի և առանց Արդշինբանկի (300 մլն ԱՄՆ դոլար) և Ամերիաբանկի (50 մլն ԱՄՆ դոլար) կողմից արտերկրում թողարկված պարտատոմսերի: Սակայն, ֆինանսական հաշվետվություններից հնարավոր չէ պարզել, թե բանկերի կողմից թողարկված պարտատոմսերի, որ մասն է գնվել ֆիզիկական անձերի կողմից:

Ֆիզ. անձերից ներգրավված ժամկետային ավանդների մնացորդների դինամիկան 2019-2020 թթ. (մլն ՀՀ դրամ)



Ժամկետային ավանդներ

- Բանկային համակարգի իրավաբանական անձերից ներգրավված ժամկետային ավանդների մնացորդը աճել է 2020թ. **69 մլրդ ՀՀ դրամով,** կամ **12.5%**:
- Նշված միջոցները բավականին կենտրոնացված են: **4** բանկերը (Արդշինբանկ ,Ամերիաբանկ, Արմսվիսբանկ և Կոնվերսբանկ) կազմում են բանկային համակարգի կողմից իրավաբանական անձերից ներգրավված ժամկետային ավանդների **57%:**
- Իրավաբանական անձերից ներգրավված ավանդների (տոկոսային արտահայտությամբ) ամենաբարձր աճ գրանցել են հետևյալ բանկերը – Արարատ Բանկ **(142%),** Ինեկոբանկ **(96%)** և Յունիբանկ **(48%)**:



Պարտատոմսեր

- Բանկային համակարգի կողմից թողարկված պարտատոմսերի մնացորդը աճել է 2020թ. **252 մլրդ ՀՀ դրամով,** կամ **140%**: Այս աճի հիմնական պատճառները, դա Արդշինբանկի (**300 մլն ԱՄՆ դոլար**) և Ամերիաբանկի (**50 մլն ԱՄՆ դոլար**) կողմից արտերկրում թողարկված պարտատոմսերն են:
- 17 գործող բանկերից, պարտատոմսեր թողարկել են 11 բանկ:
- Նշված գործիքի կիրառումը խրախուսվում է ՀՀ ԿԲ կողմից – սահմանելով 8 անգամ ավելի ցածր պարտադիր պահուստավորման նորմատիվ, քան ներգրավված ավանդների դեպքում:



Պարտատոմսեր

- Բանկային համակարգի կողմից թողարկված պարտատոմսերի ընդամենը **17%** կազմում են ՀՀ դրամային պարտատոմսերը:
- Դա բացատրվում է թե պահանջարկով, թե նաև այն հանգամանքով, որ ԿԲ առաջարկվող հատուկ պարտադիր պահուստավորման դրույքաչափերը էական ազդեցություն ունեն հենց արտարժույթով ներգրավված միջոցների վրա:

Թողարկված պարտատոմսերի արժութային կառուցվածքը առ 31.12.2020 (%)



RUMELS MANAGEMENT SOLUTIONS

RUMELS Management Solutions

Ամիրյան 1 (Արմենիա Մարիոթ Հյուրանոց,
գրասենյակ N 320),
0010, Երևան, Հայաստան

Հեռ՝ +374 60 73 79 09
Էլ. հասցե՝ info@rumels.am
Կայք՝ www.rumels.am